Հավելված N 8
Պրոբացիայի ծառայության պետի
2025 թվականի հուլիսի 10-ի
N 231-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՊՐՈԲԱՑԻԱՅԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Պրոբացիայի ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) Երևանի քաղաքային մարմինը (այսուհետ՝ Մարմին) Ծառայության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Մարմինը գործում է Սահմանադրության, օրենքների, իրավական այլ ակտերի, Ծառայության և սույն կանոնադրության հիման վրա:

2. ՄԱՐՄՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Մարմնի նպատակներն են՝

1) քրեական վարույթի ընթացքում մեղադրյալի հնարավոր անօրինական վարքագծի կանխման ու դատարանի կողմից դրված պարտականությունների կատարման ապահովման միջոցառումների իրականացումը՝ այլընտրանքային խափանման միջոցների՝ տնային կալանքի և վարչական հսկողության կիրառումն ապահովելու միջոցով.

2) հասարակության անվտանգության ապահովումը՝ կրկնահանցագործության կանխարգելման և կրճատման միջոցով.

3) պրոբացիայի շահառուի և տուժողի (տուժողի իրավահաջորդի) հաշտեցումը.

4) քրեական արդարադատության իրականացմանն աջակցությունը:

4. Մարմնի խնդիրներն են՝

1) քրեական վարույթի ընթացքում «Պրոբացիայի մասին» օրենքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարումը.

2) ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների և դատարանի կիրառած հարկադրանքի այլ միջոցների կատարումը.

3) պրոբացիայի շահառուի և տուժողի (տուժողի իրավահաջորդի) միջև հաշտարարության իրականացումը:

3. ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Մարմնի գործառույթներն են՝

1) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլընտրանքային խափանման միջոցների կատարման ապահովումը.

2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված անվտանգության միջոցների կատարման ապահովումը.

3) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված՝ ազատությունից զրկելու հետ չկապված պատիժների կատարման ապահովումը.

4) Իրավաբանական անձանց նկատմամբ դատարանի կողմից նշանակված քրեաիրավական ներգործության միջոցների կատարման ապահովումը.

5) օրենքով սահմանված դեպքերում հաշտարարության իրականացումը.

6) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված տնային կալանքի և վարչական հսկողության այլընտրանքային խափանման միջոցների, անվտանգության միջոցների, պատիժների հետ զուգահեռ կիրառվող էլեկտրոնային հսկողության կատարումը.

7) դատարան միջնորդությունների ներկայացումը, դատարաններում Ծառայության անունից ներկայացուցչության ապահովումը.

8) Մարմնի առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող առաջարկությունների, տեղեկանքների, արձանագրությունների, միջնորդագրերի, զեկուցագրերի և այլ փաստաթղթերի կազմման աշխատանքների իրականացումը.

9) պետական, տեղական ինքնակառավարման և այլ մարմիններից, պաշտոնատար անձանցից Մարմնի առջև դրված գործառույթների և խնդիրների իրականացման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվության և նյութերի ստացումը.

10) հաշվետվությունների կազմումը.

11) Մարմնի գործունեությունից բխող օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթների իրականացումը:

4. ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

6. Մարմնի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Ծառայության պետը:

7. Մարմնի անմիջական ղեկավարումն իրականացնում է Մարմնի պետը:

8. Մարմնի պետն անմիջական հաշվետու է Ծառայության պետին:

9. Մարմնի կողմից ստեղծված փաստաթղթերը ստորագրում է Մարմնի պետը, եթե օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այլ բան նախատեսված չէ:

5. ՄԱՐՄՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

10. Մարմնի կառուցվածքում ընդգրկված չեն ներքին կառուցվածքային միավորներ: